ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

1 մարտի 2016 թվականի **թիվ 20** քաղ. Մոսկվա

Որոշ արեւադարձային տեսակների փայտանյութից անտառանյութի առանձին տեսակների համար Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի՝ ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի սահմանման մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 42-րդ եւ 45-րդ հոդվածներին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Սահմանել Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման հավելված)՝ ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 4408 39 850 9 ծածկագրով դասակարգվող որոշ արեւադարձային տեսակների փայտանյութից անտառանյութի առանձին տեսակների համար ՝ մաքսային արժեքի 0 տոկոսի չափով՝ 2016 թվականի հունիսի 1-ից մինչեւ 2019 թվականի մայիսի 31-ը ներառյալ։

2. Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման հավելված) 13C ծանոթագրության մեջ «մինչեւ 31.05.2016–ը ներառյալ» բառերը փոխարինել «մինչեւ 31.05.2019-ը ներառյալ» բառերով:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի առեւտրի հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Վ. Օ. Նիկիշինային՝ ապահովել Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք սույն Որոշման 1-ին կետում նշված ապրանքի ներմուծման դիտանցումն անցկացնելը, եւ անհրաժեշտության դեպքում սույն Որոշման 1-ին կետում նշված ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի գործողության ժամկետը երկարաձգելու մասին հարցը ներկայացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նիստի քննարկմանը:

4. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունիսի 1-ից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան